ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԱՆԱՀԻՏ ՖԱՆԴՈՒՆՑԻՆ

(Հաշվետու ժամանակահատված՝ 2025 թվականի մայիսի 26-ից մինչև 2025 թվականի հունիսի 25-ը)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՈՒՆ

Ես՝ Հայտարարագրերի վերլուծության վարչության փորձագետ Լիլիթ Հակոբի Սիմոնյանս, հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ ստորև ներկայացված աշխատանքները.

1) **Հայտարարագրերի ուսումնասիրության և համալիր վերլուծությունների շրջանակներում իրականացված գործառույթներ.**

   ՁԼՄ կայքերի 4 հրապարակումների հիման վրա իրականացրել եմ հայտարարագրված տվյալների ստուգում: Ստուգումների արդյունքում կազմել եմ երկու պաշտոնատար անձանց և նրան ընտանիքի անդամների կողմից պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ գրություններ, որոնց արդյունքում իրականացրել եմ երկու պաշտոնատար անձանցից և նրանց ընտանիքի անդամներից ստացված պարզաբանումների գնահատում: Արդյունքների ամփոփումից հետո կազմել եմ 4 գրություն՝ ստուգման ավարտի վերաբերյալ:

   Իրականացրել եմ ռիսկային չափորոշիչներով սահմանված 1 պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամի կողմից ներկայացված պարզաբանումների գնահատում:

   Իրականացրել եմ 2 պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների կողմից հայտարարագրված տվյալների համալիր վերլուծության ընթացիկ աշխատանքներ:

   Կազմել եմ պետական մարմիններից տեղեկատվություն ստանալու վերաբերյալ երկու գրություն:

   Կատարել եմ Վարչության պետի կողմից տրված վարչության գործառություններին վերաբերող այլ ընթացիկ հանձնարարություններ:

Հայտարարագրերի վերլուծության վարչության

Փորձագետ՝ Լիլիթ Սիմոնյան